ՊԱՐԶԵՆՔ ԽՆԴԻՐԸ

Վերջերս սովետական իշխանութիւնների կողմից յայտնաբերուած դաշնակցական կուսակցութեան 1917—21 թուականից մնացած զէնքերի պահեստը վերցրել է այն շիրման, որ ծածկում էր դաշնակցական կուսակցութեան հակայեղափոխական անցեալը, որ սկսել էր Հոկտեմբերեան Մեծ Յեղափոխութիւնից յետոյ ընդդէմ Սովետական Հայաստանին։

Այս յայտնաբերումը առիթ է տալիս զանազան խօսակցութիւնների և բամբասանքների զանազան ռէակցիոն շրջանակներում, որոնք առիթը չեն փախցնում ազգային ատելութիւն սերմանել հայերի և տեղական ադրբէյջանցի համաքաղաքացիների միջեւ։ Հակառակ ամեն բամբասանքների անցեալում հայերն ու տեղական ադրբէյջանցիները եղել են բարի հարևաններ։

Ազգային ատելութիւն սերմանելու ինտրիգան ռէակցիայի սիրած քաղաքականութիւններից մէկն է, որ ամեն անգամ հրահրում է ընդդէմ ազգերի միաբանութեան և ընդդէմ ընդհանուր ազատագրական շարժման և դեմոկրատիայի։

Ուրիշ կերպ է ազդում այդ դէպքը այն հայերի վրայ, որոնք պարզ քաղաքական տեսակէտներ չունեն և դեռ բոլորովին չեն ազատագրուել նախկին դաշնակցական մտայնութիւնից։

Ֆաշիստական Գերմանիայի դէմ մղուած պատերազմի և տարած յաղթանակի խնդրում Սովետական երկրների ամենակարևոր և վճռական նշանակութիւնը անհուն երախտագիտութեամբ է լցրել բոլորի սիրտը դէպի Սովետները, վճռականապէս վերաբերմունքի փոփոխութիւն է առաջացրել նախկին բազմաթիւ հակառակորդների և շատ նախկին դաշնակների մէջ անգամ։ Այդ պատճառով էլ շատ պատուազգաց հայեր ազատագրուելով նախկին մտայնութիւնից ճնշւում են անցեալի յիշողութիւններից, ճնշւում են մանաւանդ երբ այդ անցեալը զուգորդւում է Դրոների, Խատիսեանների և Աբեղեանների, ֆաշիստական այդ գործակալների հայրենադաւութեան երեկւայ թարմ յիշողութիւնների հետ։

Ամեն մի պատուազգաց հայ առանց կուսակցական տարբերութեան իր զայրոյթն է արտայայտում դեռևս դաշնակցական մտայնութիւնից բոլորովին չազատագրուած անհատների վերաբերմամբ, որոնք այս կամ այն կերպ դեռս մտածում են սքողել և պատճառաբանել Դրոների դավաճանութիւնները։ Դրոների, Խատիսեանների, Աբեղեանների «դաշնակցութիւնը» գերմանական ֆաշիզմի հետ, նրանց քաղաքական պոռնկութեան էր հասցրել, քանի որ նրանք և բոլորը լաւ և շատ լաւ գիտեն, որ հայկական կոտորածները Թիւրքիայում և Հայաստանում, գերման ռազմագործների թելադրութեամբ է կատարուած, ընդդէմ ցարական և եւրոպական նախկին իմպերիալիստական քաղաքականութեան, որոնց ձեռքին խաղալիք էր դաշնակցական կուսակցութիւնը գիտակցաբար թէ անգիտակցաբար։

Հին զինապահեստի յայտնաբերումը, որը ինքն ըստ ինքեան ոչինչ չէր պարունակում, բացի տասից քան հատ ժանգոտած հին հրացաններից և փամփուշտներից ու փչացած նռնակներից և կարծես անբացատրելի պատճառով այնտեղ ընկած զինական մասերից, վերյիշել է տալիս անցեալը, որի համար դաշնակցականները քննադատուել են սփիւռքում սոցիալ դեմոկրատների, կոմունիստների և միւս հայկական կուսակցութիւնների կողմից։

Կովկասում և Հայաստանում խնդիրն արդէն դրուած էր իր ամբողջ մերկութեամբ, այնտեղ տարւում էին թշնամական գործողութիւններ ընդդէմ Հոկտեմբերեան Մեծ Յեղափոխութեան։

Քիչ արիւն չի հոսել դաշնակների, մենշևիկների և մուսաւաթիստների օրով Կովկասում, քիչ եղբայրասպան կռիւներ չեն մղել նրանք Հոկտեմբերեան Մեծ Յեղափոխութեան թափը կասեցնելու համար։

Ղարսն ու Արդահանը գրաւուել են Թիւրքիայի կողմից հէնց այն պատճառով, որ դաշնակցական կուսակցութիւնը եղբայրասպան և հակայեղափոխական կռիւ էր մղում հայ կոմունիստների դէմ Հայաստանում։ Ոչ ոք հայերից չի մոռացել Մուսայէլեանին և նրա շուրջ խմբուած հազարաւոր մարտիկներին, որոնք Հայաստանի փրկութիւնը տեսնում էին սովետական կարգերի ու Սովետական Միութեան մէջ և որոնք ընկան յեղափոխական պայքարի մէջ, ոչ ոք չի մոռացել Ղարաբաղի յեղափոխական գիւղացիներին, որոնք հակառակ դաշնակցականների քսու և կեղծաւոր ազգային քաղաքականութեան ընկան դաշնակցականների կողմից որպէս Հոկտեմբերեան Յեղափոխութեան և սովետական կարգերի դրօշակակիրներ։

Դաշնակցական կուսակցութիւնը արտասահմանում, սփիւռքի հայութեան մէջ էլ նոյն հակասովետ քաղաքականութիւնն էր տանում, և այդ նոյն ժամանակներումն էր, որ նա աշխատում էր ամեն օգնութիւն ցոյց տալ Վրանգեններին, Խատիսեաններին, Նժդեհներին և Դրոներին։ Նա աշխատում էր օգնել դրամով ու զէնքով։ Դաշնակցութիւնը իր հակայեղափոխութիւնն աշխատում էր դարձնել ազգային խնդիրը։

Ահա այդ ժամանակներից մնացած զէնքի մի պահեստ է՝ վերջերս յայտնաբերուած պահեստը։

Ինչ խօսք, որ Իրանի կառավարութիւնը, որպէս հակասովետ մի կառավարութիւն դէմ էլ չէր նման գործունէութեան. Թաւրիզի դաշնակցական մամուլը պարզ գրում էր այն մասին, որ պէտք է օգնել դաշնակցական կառավարութեան ամեն կերպ, նրանց ժողովների, խորհրդակցութիւնների և միջոցների մասին խօսում էին բոլորը։

Հետագայում միայն, Արարատեան քրդերի ապստամբութեան ժամանակւանից, երբ դաշնակցականները մեղադրւում էին ապստամբութեան մասնակցութեան մէջ և Ռիզա շահի Թիւրքիայի հետ կնքուած բարեկամութիւնից յետոյ, Ռիզա շահի կառավարութիւնը սկսեց հետապնդել դաշնակցութիւնը, միաժամանակ գործադրելով իր ռէակցիոն բռնապետական պրոֆաշիստական ծրագիրը, խլելով հայ համայնքի դպրոցներն ու վերացնելով բնական տարրական դեմոկրատական իրաւունքները—դպրոցի, լեզուի, թատրոնի և հասարակական կեանքի ազատութիւնը։

Գտնւում են պարզ քաղաքական տեսակէտներ չունեցող և յետադէմ մարդիկ, որոնք յիշեցնում են դաշնակցականների մասնակցութիւնը Իրանի սահմանադրական շարժումների մէջ, ուր քիչ գործ չեն կատարել։ Բայց մոռանում են նրանք որ շատ իրանցի, ադրբէյջանցի անհատներ և կուսակցութիւններ էլ մասնակցել են այդ շարժման և այժմ գտնւում են ռէակցիոներների բանակում, նրանք վաղուց դաւաճանել են իրենց։ Իսկ նրանցից լաւ և առաջադէմ տարրերը վաղուց ազատագրուել են հին մտայնութիւնից։

Սովետական երկրների Հայրենական մեծ պատերազմը զգաստացրել է բոլոր ազգերին։ Շատ կուսակցութիւններ խփւել են Մեծ Յեղափոխութեան և Հայրենական պատերազմի ժայռերին՝ փշրուել և տարրալուծուել են վերջնականապէս։

Պէտք է վերջնականապէս ազատագրուել անցեալ սխալ մտայնութիւնից։ Կեանքը նոր պահանջներ է դրել բոլոր ժողովուրդների առաջ—այդ դեմոկրատիկ ազատ կարգերն են, որի համար պիտի պայքարել, ազատասէր ժողովուրդների հետ միասին, ազատագրելով մեր հասարակութիւնը ամեն տեսակի պրոֆաշիստական և ֆաշիստական մնացորդներից։

25 տարուայ ընթացքում Սովետական Մեծ Միութեան մէջ Միացած Ազգերը և նրանց հետ միասին հայերը՝ անցել դարերի հաւասար զարգացման շրջան են բոլորել։

Ֆաշիստական Գերմանիայի դէմ մղուած պատերազմն ու յաղթանակը ընդհանուր յարգանք և երախտագիտութեան զգացմունքով է լցրել սփիւռքը ամբողջ հայերի սրտերը դէպի Սովետական Մեծ Միութիւնը։

Բացառութիւն են կազմում մի քանի յետադէմ անհատներ, որոնք չեն ազատագրուել իրենց նախկին տեսակէտներից և որոնք զայրոյթ են առաջացնում հայ առաջադէմ մասսայի մէջ։ Այդպիսիները վտարւում են մեր հասարակական կեանքից և կվտարուեն։

Ի՞նչ պիտի անել հոգեպէս յետադիմած անհատների հետ։

Դ. Գ.

«Հակաֆաշիստ» Թաւրիզ